**Հավելված N 1**
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2026 թվականի սեպտեմբերի 01-ի N 512-Ա որոշման

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

**1.1. Համայնքային ծառայության թափուր պաշտոնի անվանումը և պաշտոնի ծածկագիրը.**
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-6)
**1.2. Համայնքային ծառայության թափուր պաշտոնի առաջացման ամսաթիվն ու հիմքը (այն իրավական ակտով, որը հաստատում է պաշտոնը թափուր դառնալու հանգամանքը),**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի մայիսի 04-ի N 756-Ա հրամանով համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում լրացում է կատարվել:
**1.3. Համայնքային ծառայության թափուր պաշտոնի անձնագրի էլեկտրոնային համապատասխան հղումը.**
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-6) պաշտոնի անձնագիր
**2. Համայնքային ծառայության թափուր պաշտոնի մրցույթին ներկայացվող փաստաթղթերի ցանկը՝**

1) գրավոր դիմում (Ձև 1).
2) քաղաքացու դեպքում՝ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն, իսկ փախստականի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճեն.
3) դիպլոմի լուսապատճեն.
4) առնվազն միջնակարգ կրթության պահանջի դեպքում՝ կրթությունը հավաստող փաստաթուղթ (ատեստատ).
5) աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճեն.
6) արական սեռի անձինք ներկայացնում են զինվորական գրքույկի (բոլոր գրառում ունեցող էջերի լուսապատճեն) կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն.
7) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի.
8) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը.
9) հայտարարություն այն մասին, որ անձը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
10) հայտարարություն այն մասին դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չեն.
11) հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին.

**3. Համայնքային ծառայության թափուր պաշտոնի համար փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝**
2026 թվականի սեպտեմբերի 15:

**4. Մրցույթն անցկացնելու ամսաթիվը, ժամը և վայրը՝**
Մրցույթը կկայանա 2026 թվականի հոկտեմբերի 08-ին, ժամը 10:00-ին, Բյուրեղավանի Մշակույթի տան շենքում (հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց):

**5. Նշված թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը.**
280500 (երկու հարյուր ութսուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

**6. Նշված թափուր պաշտոնի համար փաստաթղթերի ընդունող Աշխատակազմի, համապատասխան մարզպետի աշխատակազմի) կոնտակտային տվյալները (հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե).**
Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմ (հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան, Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռախոսահամար՝ (0222)63236, էլեկտրոնային փոստի հասցե՝ hamaynqapetaran@byureghavan.am) կամ Կոտայքի մարզպետի աշխատակազմի Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություն (հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն վարչական շենք, հեռախոսահամար՝ (0223)23413, էլեկտրոնային փոստի հասցե՝ kotayq@mta.gov.am ), ժամը 10:00-ից 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

**7. Թեստավորման փուլի համար կազմված հարցաշարը՝ ճիշտ պատասխանի տարբերակով՝ առանց ենթադրյալ պատասխանների՝ Սահմանադրություն, Տեղական ինքնակառավարում, Համայնքային ծառայություն:**

**8. Այն նորմատիվ իրավական ակտերի ցանկը, որոնցից բխում են հարցազրույցի փուլի համար նախատեսված հարցերը:**

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ